AUA Հայաստանի Ամերիկյան Համալսարան

Ֆինանսական աջակցությունը ՀԱՀ-ում

Ներդրում կատարիր կրթությանդ մեջ այսօր և **ապահովիր** քո կայուն ապագան:

ՀԱՀ–ն իրականացնում է ընդունելություն՝ անկախ կարիքից: Մենք կարող ենք օգնել Ձեզ ֆինանսավորել Ձեր կրթությունը: Տեղեկացված եղե՛ք բոլոր հնարավոր միջոցների մասին, որոնք կօգնեն Ձեր կրթական ճանապարհում: Ձեր կրթությունն առաջնային տեղում է:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիները և ՀՀ կացության հատուկ կարգավիճակ ունեցող անձինք ավտոմատ կերպով ստանում են իրենց ուսման վճարի ընդհանուր արժեքից տարեկան 2,000,000 դրամ սուբսիդավորում: Ի հավելումն այս ամենի՝ համալսարանը ՀՀ քաղաքացիներին առաջարկում է առաջադիմության կամ կարիքի հիման վրա սահմանված ֆինանսական աջակցություն, որն էլ կիջեցնի ուսումնական վարձավճարները հավելյալ մինչև 90%-ի չափով: Միջազգային ուսանողները կարող են դիմել ուսումնական կրթաթոշակների, որոնք կարող են փակել իրենց ուսման վճարի մինչև 50%-ը:

Ֆինանսական աջակցության հիմնական տարբերակները հետևյալն են.

Ուսման վարձին ուղղված աջակցություն (միայն ՀՀ քաղաքացիների համար)*

Ուսման վարձի 25-90%-ի չափով դրամաշնորհներ՝ նախատեսված ուսումնական բարձր առաջադիմություն ունեցող ուսանողների համար: Դրամաշնորհները տրվում են Ֆինանսական աջակցության հանձնաժողովի կողմից և սահմանվում են՝ ելնելով ուսանողի ներկայացրած ֆինանսական կարիքներից, և կախված են մի շարք գործոններից:

Միջազգային կրթաթոշակ

Ուսումնական ցուցանիշի հիման վրա տրամադրվող կրթաթոշակներ, որոնք կարող են կազմել միջազգային ուսանողների ուսման վճարի մինչև 50%-ը: Դուք համապատասխանում եք այս տարբերակին, եթե չունեք ՀՀ քաղաքացիություն կամ ՀՀ կացության հատուկ կարգավիճակ:

Ճկուն սանդղակով վճարում

Ուսանողներն ավտոմատ կերպով ստանում են վճարումն իրականացնելու պլաններ, որոնք ուսման ընդհանուր արժեքը բաժանում են ուսումնական տարվա ընթացքում վճարման ենթակա ութ հավասար մասերի:

Վարձի տարժամկետ վճարում*

Կարող եք դիմել տարժամկետ վարձի վճարման տարբերակին, որը թույլ կտա վճարել ուսման վարձի մինչև 50%-ն ուսման ընթացքում, իսկ մնացածը՝ ավարտելուց հետո՝ երկու տարվա ընթացքում:

Առաջադիմության կրթաթոշակներ*

ՀԱՀ-ը նաև տրամադրում է սահմանափակ թվով առաջադիմության կրթաթոշակներ: Այս շնորհումները, որպես կանոն, կազմում են ուսման տարեկան արժեքի կեսը և կախված են դրամական միջոցների հասանելիությունից:

Ուսում և աշխատանք

Ուսումնառության երկրորդ կիսամյակից սկսած լավ առաջադիմություն ունեցող ուսանողները կարող են դիմել համալսարանի ներսում գործող վարձատրվող աշխատանքների:

Որպեսզի դիտարկվեք ֆինանսական աջակցության համար, պետք է ներկայացնեք առանձին դիմում–հայտ: Դիմումի ընթացքի, ժամկետների և այլնի վերաբերյալ տեղեկություններ ստանալու համար այցելե՛ք **finaid.aua.am/tuition-assistance** կայք-էջ:

*Շարունակելի ընդունելությամբ դիմող դիմորդների համար հնարավոր է ֆոնդերի սահմանափակում:

Ֆինանսական աջակցության ընդհանուր պատկերը

Ֆինանսական օժանդակություն





Միջազգային կրթաթոշակներ



Վերոհիշյալ տեղեկատվությունը հիմնված է 2021 թվականի աշնանն ընդունված և ցուցակագրված 490 դիմորդների ֆինանսական աջակցության ցուցանիշների վրա:

Ուսման վարձ և վճարներ

Դուք պետք է դիմեք ֆինանսական աջակցության համար ընդունելությանը զուգահեռ: Ընդունվելուց հետո այլևս չեք կարող դիմել ֆինանսական աջակցության: Հիշեք նաև, որ ֆինանսական աջակցությանը դիմելը չի ազդի Ձեր ընդունելության դիմում-հայտի վրա:

Նախքան ՀԱՀ դիմելը պետք է հաշվի առնել կրթության ֆինանսավորման Ձեր տարբերակները: Ընդունված ուսանողներն ուսումը սկսելուց առաջ կնքում են պայմանագիր, որով սահմանվում է իրենց վճարն ուսման ամբողջ տևողության համար: Բոլոր վճարները կատարվում են ՀՀ դրամով (Դ):

Գրանցման պահին դիմորդները դասակարգվում են որպես.

- *ՀՀ քաղաքացիներ**
- *ՀՀ կացության հատուկ կարգավիճակ ունեցող անձինք*
- *Միջազգային քաղաքացիներ*

2022-2023 ուսումնական տարվա բակալավրի կրթական ծրագրերում ընդգրկված ուսանողների տարեկան ուսման վարձը և վճարները մինչև ֆինանսական աջակցություն ստանալը հետևյալն են՝

	ՀՀ քաղաքացիներ* և ՀՀ կացության հատուկ կարգավիճակ ունեցող անձինք	Միջազգային քաղաքացիներ
Գործարարություն	2,250,000Դ	4,250,000Դ
Մնացած բոլոր ծրագրերը**	1,700,000Դ	3,700,000Դ
Ուսանողական ծառայությունների վճար	25,000Դ	
Առողջական ապահովագրություն***	10,000Դ/ամսական	

*ՀՀ քաղաքացիներ են համարվում նաև ՀՀ Բարձրագույն և հետբուհական կրթության օրենքի 1-ին գլխի 6-րդ հոդվածի 3-րդ կետում նշված քաղաքացիները:

**Ներառված են Անգլերեն և հաղորդակցություն, Քաղաքականություն և պետական կառավարում, Համակարգչի գիտություն, Ճարտարագիտություն և Տվյալագիտություն ծրագրերը:

***ՀԱՀ-ը պահանջում է բժշկական ապահովագրության ապացույց այն ուսանողներից, ովքեր չունեն ՀՀ քաղաքացիություն: Այն կարող եք ձեռք բերել առողջության ապահովագրության ցանկացած մատակարարից: Այլ դեպքերում, ՀԱՀ-ն առաջարկում է ապահովագրության ստացում՝ համալսարանի մատակարարի միջոցով, ինչը կազմում է ամսական մոտ 10,000 դրամ:

Ուսման վճարի, ֆինանսական աջակցության և կրթաթոշակների մասին հավելյալ տեղեկություն ստանալու համար այցելեք **admissions.aua.am/tuition-and-finaid**:

Հայաստանի ամերիկյան համալսարան
Մարշալ Բաղրամյան 40
Երևան, 0019, Հայաստան
+374 60 69 40 40
aua.am

Ընդունելության գրասենյակ
108Մ սենյակ
+374 60 61 27 50
Դիմեք im.aua.am կայք-էջով
ugrad@aua.am
admissions.aua.am/ugrad

Ֆինանսական օժանդակության գրասենյակ
304Մ սենյակ
+374 60 69 40 40 ext. 2
financialaid@aua.am
finaid.aua.am

Սոցիալական կայքեր
/AUAAdmissions
/AUArmenia
/aua_insta
/AUAuploads
/@AUAtweets

V02 11/21

Հայաստանի ամերիկյան համալսարանը հավատարմագրված է ԴԲԱԸ ԲՈՒՀ-երի հանձնաժողովի (WASC Senior College and University Commission) կողմից՝ 1001 Marina Village Parkway, Suite 402, Alameda, CA 94501, 510.748.9001, **www.wscuc.org**: ՀԱՀ-ը նաև համագործակցում է Քալիֆորնիայի համալսարանի հետ: